**A.SPENDIARIAN OPERA AND BALLET NATIONAL ACADEMIC THEATRE, NON-COMMERCIAL STATE ORGANIZATION, OBT NCSO**

www.opera.am

**"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА" ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ, ТОБ ГНКО**

**«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՕԲԹ ՊՈԱԿ**

Հայաստան, Երեւան 0002, Թումանյան 54, Հեռ.՝ 52 02 41, ֆաքս՝ 52 02 41
54, Tumanian Str., Yerevan 0002, Armenia, tel:(+374 10) 52 02 41, Fax:(+374 10) 52 02 41

2/199
19 փետրվարի 2015թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով**
**գնման ընթացակարգով շրջանակային**
**համաձայնագրեր կնքած մասնակիցներին**

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված N ՇՀԱՇՁԲ-11/3 շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված տպագրական աշխատանքներ : Տպագրական աշխատանքների մատակարարման պայմանները ներկայացված են կից ներկայացվող պայմանագրի նախագծում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել N **«ՕԲԹ-ՇՀԱՇՁԲ-11/3 - 15/17»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, ք. Երևան, Թումանյան 54 ,3-րդ հարկ, հանձնաժողովի քարտուղար Հ.Գեղամյանին, 2015թ. մարտի 3-ին, ժամը 15:00:

Հայտերը կբացվեն, <<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Թումանյան 54, 3-րդ հարկ, 2015թ. մարտի 3-ին, ժամը 15:00:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և / կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և / կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և / կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և / կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և / կամ տվյալները:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Տնօրեն՝ Ա.Արզումանյան

Կատարող՝ Հ.Գեղամյան
Հեռ.՝ 54 61 59, operaandbalet@gmail.com